Ենթակա է հրապարակման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հուլիսի 8-10-ը

Ռուսաստանի Դաշնություն (Եկատերինբուրգ) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**

Տիգրան Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Եկատերինբուրգ (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի հուլիսի 8-10-ը:

4. **Հրավիրող կողմը՝**

ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարություն, Եվրասիական տնտեսական հանձնաժողով,

5. **Գործուղման նպատակը**

Արտադրության և արդյունաբերության գլոբալ GMIS 2019 (The Global Manufacturing and Industrialisation Summit) գագաթնաժողովին և ԵԱՏՄ անդամ պետությունների արդյունաբերության նախարարների հանդիպմանը մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները**

Արդյունաբերության ոլորտում ԵԱՏՄ երկրների հետագա ինտեգրացիոն գործընթացների, ԵԱՏՄ վերազգային կազմակերպությունների ստեղծման, երրորդ երկրներում ԵԱՏՄ արդյունաբերական ենթակառուցվածքների, Եվրասիական ինժինիրինգային կենտրոնի գործունեության մասին հացերի քննարկում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Որպես բանախոս՝ մասնակցել եմ «Բազմազանեցված զարգացում և Եվրասիայի արդյունաբերական մրցունակության ապագայի սահմանում. քաղաքականությունից մինչև գործնական քայլեր» խորագրով նախարարական պանելային քննարկմանը: Ներկայացրել եմ ԵԱՏՄ միասնական արդյունաբերական քաղաքականության մշակման մասին դիտարկումներ՝ ընդգծելով բարձր տեխնոլոգիաների ներգրավումը արտադրական գործընթացներում արտադրողականության բարձրացման համատեքստում:

Հանդիպել եմ Սվերդլովսկի մարզպետի առաջին տեղակալ Ալեքսեյ Օրլովի հետ: Քննարկել եմ Սվերդլովսկի մարզի և Հայաստանի միջև համագործակցության զարգացման հեռանկարները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում ստորագրվել է համապատասխան արձանագրություն: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել աշխատանքներն՝ ուղղված արդյունաբերական համագործակցության զարգացմանը:

Առաջարկվել է կազմակերպել հանդիպում Հայաստանի և Սվերդլովսկի մարզի գործարար համայնքի ներկայացուցիչների համար, ինչպես նաև զարգացնել փոխգործակցությունը արդյունաբերության, տրանսպորտի և զբոսաշրջության ոլորտներում:

Առևտրաշրջանառության ծավալների աճի դրական միտումների պահպանման, համատեղ հումանիտար և գիտատեխնիկական ծրագրերի մշակման և իրականացման նպատակով, Սվերդլովսկի մարզի ղեկավարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել

քննարկել իրավական փաստաթղթով համագործակցության ուղղությունների ամրագրման հնարավորությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է.

- որպես հիմք ընդունել ԵՏՀ կողմից ներկայացված առաջարկությունները ԵԱՏՄ շրջանակներում արդյունաբերական ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման ուղղությամբ,
- քննարկել Եվրասիական վերազգային կազմակերպությունների ստեղծման հարցը ԵԱՏՄ Միջկառավարական խորհրդի և բարձրագույն խորհրդի նիստերին,
- ընդհանուր գործակցության հիմքերի ամրապնդման տեսանկյունից Սվերդլովսկի մարզի ղեկավարությունն առանձնահատուկ կարևորել է մարզերի միջև կապերի սերտացման անհրաժեշտությունը:

10. Գործուղվողը

Տիգրան Խաչատրյան _____

15.07.2019թ.